

գտնուող տաճիկ (հնարաւոր է՝ արաբ) «մեծ մարդու» դերի պարզաբանումը: Այդ անձնաւորութիւնը գերի ընկած լինելու կամ էլ մէկ այլ պատճառով ազատութիւնից զրկուած անձնաւորութիւն պէտք է լինէր եւ եթէ իմացել է հայերէն, ապա հաւանաբար՝ սահմանափակ չափով: Բայց արաբերէնի մէջ, ինչպէս երեւում է, քաջահմուտ չեն եղել նաեւ անեցի գործիչները: Հետեւաբար՝ նրանք բոլորն էլ, չորսը միասին, մասնակցել են թարգմանութեան իրականացմանը: Յիշատակարանի «եւ այս գիրս ի հետ յայն զըտանին եւ յայս երեք հոգին փոխել են» արտայայտութիւնը թոյլ է տալիս կարծել, որ «ի հետ»-ը վերաբերում է «մեծ», այսինքն՝ տարէց, ծեր «տաճիկին»: Նա է, որ պէտք է հմուտ լինէր երազների մեկնաբանութեան ասպարէզում եւ անեցի գործիչներին բացատրէր տեսական գրոյթներն ու անձանօթ հասկացութիւնները: Հնարաւոր է, որ նա է եղել խորհրդատուն թարգմանութեան համար համապատասխան մեկնողական երկ ընտրելու առումով: Չի բացառում նաեւ, որ ծերունի օտարականն է տրամադրել համապատասխան արաբերէն ձեռագիրը: Այսինքն՝ նա կատարել է այն դերը, որ ժ.գ. դարի վերջին վիճակուել է այն հայ գերուն, ով օգնել է մամուլներին հայերէնից արաբերէն թարգմանել մինչեւ այդ արաբերէնից հայերէն թարգմանուած ձեռագրական ձեռնարկը: Ինչպէս նշում է հայերէնից արաբերէն թարգմանութիւնն իրականացնողը, աւելի շուտ թարգմանական աշխատանքների ղեկավարը, «գեղերի ու գեղաբոյսերի անունները եւ եզրերը (տերմինները) [յաճախ] արաբերէն ան-

հասկանալի էին եւ բարձրեալն աստուած նրան (թարգմանութեան ղեկավարին - Հ. Մ.) օգնեց հայ գերիների մէջ մի վիրաբոյժ գտնել, որը անհասկանալի բառերը բանիմացութեամբ բացատրեց, քանզի այդ գիրքը բովանդակում էր այն, ինչ նա ստուգել էր փորձով, իսկութիւնը ճշտել եւ ճշմարտութիւնն իմացել էր»²⁸: Այսպիսի գործուն մասնակցութիւնը թարգմանութեանը հիմնովին տարբերում է այն դերից, որ մեր օրերում կատարում են բառացի թարգմանութիւն իրականացնողները, եւ բարձր գնահատանքի է արժանի:

Որպէս թարգմանութեան վայր, ինչպէս տեսանք, յիշատակում են Մաղասբերդը եւ Ծարքարը, որոնց նոյնացման կամ տարբեր լինելու, իսկ Ծարքարի դէպքում՝ ճշգրիտ տեղորոշման վերաբերեալ քննարկումները շարունակում են²⁹:

Թարգմանութեան յիշատակարանի վերջում նշուած «ՈՂԱ թուին ի հայ լեզուի սահմի ամսոյ Գ աւուրն» առաւել քան կոնկրետ է եւ ենթադրել է տալիս, որ աշխատանքների աւարտման օրն է: Հայոց Մեծ թուականով նշուած տարեթիւը համապատասխանում է 1222 թ. մարտի 28-ին³⁰ եւ եթէ իրօք վերաբերում է աշխատանքների աւարտման օրուան, ապա բուն գործընթացը ծաւալուել է 1221 թ. աշնան - 1222 թ. ձմռան ամիսներին:

28 Բ. Չուգասեան, Ա. Տէր-Ղեւոնդեան, «Բժշկարան ձիոյ» երկի նորայայտ արաբերէն թարգմանութիւնը, - ՀՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1985, թիւ 11, էջ 64:
 29 Տե՛ս Կ. Մաթեոսեան, Աշ. աշխ., էջ 216-235. P. Dangles, Mahasberd retrouvée, Mélanges Jean-Pierre Mahé (Travaux et memoires 18), Paris, 2014, p. 205-220:
 30 Հ. Բաղալեան, Օրացոյցի պատմութիւն, Երեւան, 1970, էջ 369: Ն. Ակիբեանը (Գրիգորիս Ա կաթողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958, էջ ԾԾ) և Վ. Արրահամեանը (Արճեստները Հայաստանում IV-XVIII դդ., Երևան, 1956, էջ 29-30) նշում են 1221 թ.:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԴԵՐԸ ԻՐԱՆԱՀՊԱՏԱԿ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Քրիստիսէ Կոստիկեան

Շահ Աբաս Ա-ի կողմից հայերի բռնի զաղթեցումից յետոյ Սպահանում հիմնուած Նոր Զուղան իր ուրոյն տեղն ունի իրանի ու իրանահպատակ հայութեան պատմութեան մէջ: Նոր Զուղայի հայ վաճառականներն ու առեւտրական կապիտալը կարեւոր դեր էին խաղում իրանի տուեալ ժամանակաշրջանի տնտեսութեան մէջ եւ համաշխարհային առեւտրում: Այս հարցը բազմիցս ուսումնասիրուել է հայ եւ օտար հետազօտողների աշխատութիւններում: Նպատակ չունենալով կրկին անդրադառնալ դրան՝ սոյն յօդուածում կը ցանկանայինք կանգ առնել Նոր Զուղայի հայութեան ու յատկապէս՝ մեծահարուստ վաճառականների գործունէութեան մէկ այլ կողմի՝ այն կարեւոր դերի վրայ, որ նրանք խաղում էին իրանական տիրապետութեան տակ գտնուող Արեւելեան Հաստանի ու ընդհանրապէս իրանահպատակ հայութեան իրաւունքների պաշտպանութեան գործում: Նոր Զուղայի հայ վաճառականներն ունէին բարձր սոցիալական կարգավիճակ: Նրանք համարում էին իրանական հասարակութեան բարձր խաւի ներկայացուցիչներ, եւ նրանցից շատերը կրում էին «խօջա» տիտղոսը, որը տրոււ էր մարդկանց՝ ի նշան նրանց հարստութեան, յատուկ ծառայութիւնների, խելքի թեան, յատուկ ծառայութիւնների, խելքի թեան, յատուկ ծառայութիւնների, Գտնուելով ու արժանիքների՝ համար: Գտնուելով մայր թագուհու յատուկ հովանաւորութեան տակ՝ հայ խօջաներից շատերը մուտք ունէին պարսից արքունիք եւ ար-

տօնեալ դիրք էին զբաղեցնում: Նրանցից ոմանք հանդէս էին գալիս տնտեսական գծով շահի խորհրդականի դերում եւ մասնակցում Սեֆեան շահի ու եւրոպական երկրների միջեւ վարուող առեւտրական բանակցութիւններին:

Նոր Զուղայի թեմը ժէ. դարում դառնում է Հայոց Եկեղեցու կարեւոր թեմերից մէկը, իսկ թեմական կենտրոն հանդիսանում է Հայոց Եկեղեցու եւ Սեֆեան վերցնում Հայոց Եկեղեցու եւ Սեֆեան արքունիքի միջեւ կապն ապահովող կամուրջի դերը: Հարուստ վաճառականների մուրջի դերը: Հարուստ վաճառականների ֆինանսական ու բարոյական աջակցութիւնը եւ էջմիածնի կաթողիկոսի ու Նոր Զուղայի առաջնորդների համագործակցութիւնը ապահովում են այդ հայկական թեմի եզակի կարեւորութիւն ունեցող դիրքը: Իր հեղինակութեամբ այն հաւասարուում է Պոլսի պատրիարքարանին²: Իրենց արտօնեալ դիրքի շնորհիւ հայ ազգեցիկ վաճառականները կարողանում են միջամտել իրանահպատակ հայութեանը վերաբերող հարցերին եւ ազդել շահի կայացմանը որոշումների վրայ: Բացի ժամանակաշրջանի միւս ազգայնականներից, այս իրողութեան փաստացի վկաներն են Մատենադարանում, Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում եւ այլուր կիչ վանքի թանգարանում եւ այլուր պահպանուած պարսկերէն վաւերագրերը:

Յայտնի իրողութիւն է, որ իրանական պետութեան տիրապետութեան ներքոյ գտնուող Հայոց Եկեղեցու ու հայութեան իրաւունքների պաշտպանութեան ու կենսական նշանակութիւն ունեցող շատ հար-

1 V. Ghougassian, *The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the 17th Century*, Columbia University, 1995, p. 80.

2 Նոյն տեղում, էջ 134:

Ղի, Բոխենիս, Ղարադոյունլու, Մելիքի, Օշական, Նորագիւղ, Քասաղ, Թեղնեաց, Սանտօ, Սեւաւեր, Բաթոխնչ եւ Բիւրական գիւղերում³⁹: Նա հոգում է նաեւ վանական կալուածքները ջրով ապահովելու մասին՝ երկու տարբեր տեղերից ջուր բերելով, մէկը՝ Նորագիւղի արտերը ոռոգելու, միւսը՝ Մայր Աթոռի կարիքների համար⁴⁰: Յակօբ Զուղայեցու ջանքերով Իրանի մահմեդական հոգեւորականութեան բարձրագոյն ատեանից ձեռք են բերւում հայ ժողովրդի համար կենսական նշանակութիւն ունեցող կրօնական իրաւունքները (օրինակ՝ հայկական օրէնքներով ամուսնանալը, հանգուցեալներին թաղելը, եկեղեցու զանգեր խփելը, ժամերգութիւն կատարելը, ինչպէս նաեւ՝ եկեղեցիներ վերանորոգելն ու նորերը կառուցելը⁴¹) պաշտպանող ֆաթուաներ⁴² եւ դրանք վաւերացւում շահական հրովարտակներով⁴³: Կարծում ենք, որ այս հրամանագրերի առկայութիւնն է հնարաւորութիւն տուել Սեֆեան տիրապետութեան տակ գտնուող Արեւելեան Հայաստանի հայութեանը չէզոքացնել այս շրջանում աճող կրօնական անհանգուրժողականութիւնը եւ իրականացնել այն լայնածաւալ եկեղեցական շինարարութիւնը, որով բնորոշւում է յիշեալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմութիւնը:

Իրանահայատակ հայութեան համար մեծ կարեւորութիւն ունեցող այս փաս-

39 Մադաքիս արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 2990:
 40 Նոյն տեղում, էջ 2918:
 41 Ք. Պ. Կոստիկեան, Մատենադարանի պարսկերէն հրովարտակները, պրակ III, վաւ. 20, 29, 33, 35 եւ այլն:
 42 Մուսուլմանական կրօնապետների՝ շէյխ ուլ-իւլամների եւ մուֆթիների, ինչպէս նաեւ՝ կրօնական բարձրագոյն ատեանի՝ շար'ի կողմից այս կամ այն հարցի մասին տրուած վերջնական վճիռ, որը օրէնքի ուժ ունէր:
 43 Ք. Պ. Կոստիկեան, Մատենադարանի պարսկերէն հրովարտակները, պրակ III, վաւ. 28, 31, 34:

տաթղթերի ձեռք բերման գործում Նոր Զուղայի հայ վաճառականների ունեցած դերի մասին է խօսում նաեւ այն, որ այս շրջանի ֆաթուաների մէջ կան նաեւ այնպիսիք, որոնք պաշտպանում էին Իրանում ու հարեւան շրջաններում ճանապարհորդող վաճառականներին աւելորդ հարկապահանջութիւնից ու բռնի մահմեդականացումից⁴⁴:

Նախկինում Ս. Ամենափրկչի առաջնորդը եւ Պարսկաստանի մետրապօլիտը հանդիսացող Ալեքսանդր Զուղայեցի կաթողիկոսը յայտնի էր հայ լուսաւորչական եկեղեցու դաւանանքը պաշտպանող իր աշխատութիւններով⁴⁵: Սիմէոն Երեւանցին նշում է, որ նա եղել է աստուածաբանական գիտելիքներ ունեցող, «չնորհներով լի» մի անձնաւորութիւն, ով հոգ է տարել նաեւ Մայր Աթոռի վանքի շինութիւնների վերանորոգման ու կալուածքների ընդարձակման մասին⁴⁶: Նրա կաթողիկոսութեան շրջանից (1706-1714 թթ.) պահպանուել է 14 հրովարտակ⁴⁷, այդ թւում՝ Մայր Աթոռ պաշտպանող, կաթողիկական քարոզչութիւնը հայութեան շրջանում սահմանափակող վերը նշուած հրամանագրերը:

Նոր Զուղայի հետ սերտ կապեր ունեցող կաթողիկոսների դերը հայութեան իրաւունքների պաշտպանութեան գործում աւելի ակնյայտ է դառնում, երբ համեմատւում ենք Յակօբ Զուղայեցու եւ Ալեքսանդր Զուղայեցու օրօք ձեռք բերւած շահական հրովարտակների քանակն ու բովանդակութիւնը նրանց միջեւ կաթողիկոսական գահը զբաղեցրած Եղիազար

44 Նոյն տեղում, վաւ. 21, 35:
 45 Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, էջ 3184-3185:
 46 Սիմէոն Երեւանցի, Ջամբո, Երեւան, 2003, էջ 39:
 47 Ք. Պ. Կոստիկեան, Մատենադարանի պարսկերէն հրովարտակները, պրակ III, վաւ. 69, 71, 73-84:

Այնթապցու ու Նահապետ Ուռհայեցու ժամանակաշրջանից մեզ հասած հրովարտակների հետ: Վերջիններս իրենց կաթողիկոսութեան 26 տարիների ընթացքում կարողանում են ձեռք բերել ընդամենը 5 շահական հրամանագիր. չորսը հաստատում էին նրանց կաթողիկոսական իրաւունքները եւ միայն մէկը նպատակ ունէր պաշտպանել Մայր Աթոռի վանական կալուածքները մահմեդականացած հայերի յաւակնութիւններից⁴⁸:

Պատճառներից մէկն այն էր, որ այս կաթողիկոսներին էլք աջակցում Նոր Զուղայի հայութիւնը: Այնտեղի հայերն անգամ հրաժարւում են ընդունել Նահապետ Ուռհայեցու կաթողիկոսութիւնը՝ համարելով նրա ընտրութիւնն անօրինական եւ այդ կապակցութեամբ տպագրում են շրջաբերական⁴⁹:

Իր մահից առաջ գրուած կտակով Ալեքսանդր Զուղայեցին որպէս իր յաջորդ մատնանշում է Նոր Զուղայի առաջնորդ Մովսէս Զուղայեցուն⁵⁰: Նոր Զուղայի առաջնորդների կաթողիկոսութիւնը ջուղայեցիներին հաճոյանալու նպատակով էր արւում եւ, ինչպէս իրաւամբ նկատում է Մ. Օրմանեանը, կարող եւ ունեւոր ջուղայեցիների օժանդակութեամբ էր, որ կաթողիկոսները «չինարար կը դառնային»⁵¹: Մովսէս Զուղայեցին Այնուլամենայնիւ, Մովսէս Զուղայի Ս. փոխարէն առաջարկում է Նոր Զուղայի Ս. Ամենափրկչի վանքի եպիսկոպոս Աստուածատուրի թեկնածութիւնը, ով էլ 1715 թ. մայիսի 7-ին օճուում է կաթողիկոս⁵²: Վեր-

48 Նոյն տեղում, վաւ. 50, 51, 56, 57, 62, 67:
 49 Ա. Այվազեան, Հայոց եկեղեցիներ XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երեւան, 2003, էջ 171-181:
 50 Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Բ, 2001, էջ 3239:
 51 Նոյն տեղում, էջ 3241:
 52 Նոյն տեղում, էջ 3242-3:

ջինիս կաթողիկոսութեան շրջանը (մահացել է 1725 թ.) համընկնում է Իրանի Սեֆեան պետութեան անկման շրջանի հետ: 1722 թ. Սեֆեան շահ Սուլթան Զուսէյնը իր գահը յանձնում է գրեթէ ողջ Իրանը իրենց ենթարկած աֆղան ապստամբների զօրքի առաջնորդ Մահմուդին: ԺԼ. դարի 20-ականների սկզբին վերանում է իրանական տիրապետութիւնը Այսրկովկասում՝ աստիճանաբար փոխարինուելով Օսմանեան կայսրութեան գերիշխանութեամբ: Սեֆեանական ապստամբութիւնը եւ Սեֆեան պետութեան անկումը ծանր հետեւանքներ են ունենում նաեւ Նոր Զուղայի հայկական համայնքի համար, որը դրանից յետոյ խիստ թուլանում է: Այնուամենայնիւ, Նոր Զուղայի հետ սերտ կապեր ունեցող Աստուածատուր կաթողիկոսը կարողանում է ձեռք բերել երկու կարեւոր հրովարտակ, որոնցից մէկը 1718 թ. վերահաստատուելով, որոնցից մէկը 1718 թ. վերահաստատուելով շահ Սուլթան Զուսէյնի 1710 թ. հրովարտակը կաթողիկական քարոզչութիւնը հայութեան շրջանում սահմանափակելու մասին⁵³, իսկ միւսը 1724 թ. հրահանգներ էր, որով մի շարք դատական ու վարչական ատեաններում իրենց իրաւունքները հաստատելուց յետոյ միայն նոր մահմեդականացած հայերին թոյլ էր տրւում յաւակնել իրենց քրիստոնեայ ազգականների ունեցուածքին⁵⁴: Այս հրովարտակը գործադրուելու դէպքում, փաստօրէն, պէտք է դժուարացնէր Իմամ Ջաֆարի օրէնքի կիրառումը մահմեդականացած հայերի համար. վերջիններս, ըստ այդ օրէնքի, կարող էին տէր դառնալ իրենց հեռուոր եւ մօտ ազգականների ունեցուածքին⁵⁵:

53 Մատենադարան, կաթողիկոսական դիւան, թիթ. 19, վաւ. 272:
 54 Ք. Պ. Կոստիկեան, Մատենադարանի պարսկերէն հրովարտակները, պրակ III, վաւ. 86:
 55 Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Յ. Դ. Փափազեան, Սեֆեան Իրանի ասիմիլյատորական քաղաքականութեան հարցի շուրջ, «Բանբեր

Սեֆեան պետութեան անկումից յետոյ Նոր Զուղան աստիճանաբար թուլանում է: Այսրկովկասում իրանական տիրապետութեան վերացումը 1724-1735 թթ. եւ Նադիր շահի մահից յետոյ (1747 թ.) իր հերթին նուազեցնում է Նոր Զուղայի դերը հայութեան կեանքում: Այնուամենայնիւ, այն շարունակում է մնալ շահական արքունիքի հետ Հայ Եկեղեցին կապող օղակներից մէկը: Ուստի պատահական չէ, որ հայոց կաթողիկոսները շարունակում էին օգտուել ազդեցիկ ջուղայեցիների ծառայութիւններին:

Նոր Զուղայի հայութեան դերը մատնանշող մի վաւերագիր էլ կազմուել է 1766 թ. էջմիածնի Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի կողմից բարձրացուած մի հարցի կապակցութեամբ, որ վերաբերում է Մայր Աթոռին պատկանող Խան-արխի, Խաթուն-արխի ու Իմամ-արխի կոչուած ջրանցքների ջրի տնօրինման խնդրին: Մեծամօր (Ղարասու) գետից բերուած այդ ջրանցք-

ները կառուցուել էին Յակոբ Զուղայեցի կաթողիկոսի օրօք Երեւանի Սեֆի Ղուլի խանի ու նրա կնոջ կողմից՝ նպաստելով մի շարք վայրերի բնակեցմանն ու ոռոգովի հողագործութեան զարգացմանը⁵⁶: Ըստ վերոյիշեալ վաւերագրի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը Նոր Զուղայի քաղանթար Սարգսի աջակցութեամբ կարողանում է հաստատել Մայր Աթոռի իրաւունքները ջրանցքների նկատմամբ⁵⁷:

Ինչպէս տեսնում ենք, թէ՛ ժէ. դարում իր ծաղկման շրջանում, եւ թէ՛ յետագայում՝ ժԸ. դարի երկրորդ կէսին, երբ Նոր Զուղան անկում էր ապրում, այն շարունակում էր կարեւոր դեր խաղալ իրանահպատակ հայութեան կեանքում՝ օգնելով հայ բարձրաստիճան հոգեւորականութեանը ձեռք բերել շահական հրամանագրեր, որոնք պաշտպանում էին հայութեան ու Հայ Եկեղեցու իրաւունքները մահմեդական իշխանութեան պայմաններում:

Մատենադարան», Երեւան 1956, թիւ 3, էջ 87-88, նաեւ Ք. Պ. Կոստիկեան, Մատենադարանի պարսկերէն հրովարտականքը, պրակ III, էջ 24:

56 Սիմէոն Երեւանցի, Ջամբո, էջ 220:

57 Մատենադարան, կաթողիկոսական դիւան, թղթ. 1գ, վաւ. 456:

THE ROLE OF NEW JULFA IN THE PROTECTION OF THE RIGHTS OF THE ARMENIANS SUBJECT TO IRAN
(Summary)

Armenian khojas, the wealthy and influential merchants of New Julfa, who were standing high in royal esteem, played an important role in protection of the rights of Armenian Church and Armenian people living in the regions under the rule of the Safavid shahs. They assisted the local Armenian high clergymen and the catholicoses of St. Etchmiadzin in obtaining royal decrees favouring the interests of the Armenian Church and the Armenian people subject to Iran and ensuring their safety from any encroachments. The evidences of such activities of the influential merchants are kept in the Persian decrees of the Matenadaran and the archive of the All Saviour's Church in New Julfa. The Persian documents have kept the

names of the kalantars, the chief civil administrators of the Armenian community of New Julfa, who had acted as mediators before shah for issuing some of the royal orders. Such evidences can be found in the decrees protecting the rights of Armenian Church and its community from Catholic missionary propaganda, Moslem intolerance, strengthened in certain periods of Safavid rule. These was at the bottom of the fact that in the period from the second half of the XVII Century down to 1725 (the period of the rise of New Julfa), some of the catholicoses of All Armenians, coming from New Julfa, appeared as outstanding religious leaders, who managed to use their ties in favour of their people and ensure their better state under Persian rule.